

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Père G. Kalemkarian M. chitarist ngasse
N° 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առատահմանի համար (Երկու քիւր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Անկիրկայի » 2.60 տղ. վեցամս 1.50
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ. — Վ Ս Ռ Ն Ա. (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„И правункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Iraounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան 'ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դաստաւ-
ները միայն կը հրատարակուին աւ-
թողջովին կամ մասամբ:
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-
քն աւելի անգամներու համար 20 0/0
զեղել կը լինի:

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ


Լուսաւորեալ ազգերու մէջ քնն-
նադատութիւնը յառաջագիւժու-
թեան խթանը կը նկատուի: Սոս
մանադրական պետութեանց վեհա-
պետները իսկ իրենց երկիրը կա-
ռավարող օրուան նախարարութեան
գործերը քննադատութեան են:
Թարկող հակառակ կուսակցու-
թեանց պետներուն հետ մասնաւոր
յարգածքով կը վերաբերուին: Ե-
րեսիփոխանական ժողովներու մէջ
հակառակ կուսակցութեան պատ-
կանող երեսիփոխանաց թիւը որչափ
որ ալ փոքր ըլլայ, ատենց կողմէ
եղած հարցապնդումներուն օրուան
նախարարը լուրջ եւ գրական փաս-
տերով պատասխաններ ու բացատ-
րութիւններ կուտայ առանց իր
հովաւակորդին անձնական անար-
գանք կամ կծու ակնարկութիւն
մը ուղղելու: Այս եղանակով կըն-
թանան նաեւ քաղաքակիրթ ազ-
գերու մէջ կազմուած մեծամեծ
լահաւորական կամ բարեգործական
ընկերութեանց գործառնութիւն-
ներու քննադատութիւնները ու բա-
ցատրութիւնները: Քննադատողնե-
րը որչափ կծու, որչափ խիստ ալ
գտնուին, օրուան վարչութիւնը
բնաւ չի նկրտիր իր հակառակորդ
ներուն մատնիչ, դաւաճան, սրի-
կայ եւ այս կարգի ստոր բառե-
րով պատասխանելու եւ կամ ուղ-
ղուած հարցումները առանց պա-
տասխանի ձգելու: Որովհետեւ հան-
րային գործոց ղեկավարները միշտ
զիրենք պատասխանատու կը նկա-
տեն հասարակութեան: Ու եթէ ի-
րենց գործերու մասին հանրութեան
մէջ խալ կարծիքի մը անպատ տա

րաձայնութեան մը չուրկը լսեն,
անմիջապէս ո՛ր է պարկեշտ մի-
ջոցով այդ սխալը սրբադրելու
եւ հանրութեան միտքը անգործա-
ցրելու փութկոտութիւնը կուսնե-
ան: Միեւնոյն ատեն կը ջանան
իրենց գործառնութեանց մէջ աշա-
ւուրջ գտնուիլ ու կարելի եղածին
չափ քննադատութեանց տեղի չի
տալ: Ահա այս պատճառաւ է որ
քննադատութիւնը յառաջագիւժու-
թեան խթան է նկատուած, եւ
քննադատողները կը յարգուին
թէ՛ վեհապետներէն, թէ՛ հասա-
րակութենէն եւ թէ՛ նոյն իսկ քնն-
նադատեալ հակառակորդներու կող-
մէն:

Իսկ մեր մէջ, մանաւանդ մեր
յեղափոխական կուսակցութեանց
մէջ ստոր հակառակն է որ տեղի
կուսնենայ:
Հայերս բնաւ քննադատութիւն
չենք սիրեր: Թաղական, հոգաբար-
ձու, վարժապետ զիրենք քննադա-
տողները՝ որչափ որ ալ արդար եւ
անհրաժեշտ փաստերով ներկայա-
նան՝ իրենց անհաշտ թշնամի կը
նկատեն: Եթէ քննադատը խմբա-
գիր մըն է, իրենց առաջին գործը
կըլլայ անոր թերթին գոյութիւնը
քանդել ջանալ, եթէ այդ չի կըր-
նան ընել, գոնէ իրենց բարեկամ-
ներուն կը յանձնարարեն որ այդ
թերթին բաժանորդ ըլլալէ դադ-
րին: Եթէ քննադատողը յե-
ղափոխական գործիչ մըն է, ի-
րեն համար աւնն աւնաղնիչ
միջոց ներելի կը դատէ այդ
քննադատը լռեցնելու: Իսկ երբ
այդ միջոցներով չի յաջողի, կաշ-
խատի հրէական պոռնութիւններով
ժողովուրդը համոզել ջանալ թէ՛
դա յեղափոխական սուրբ գործին
թշնամին է, դա կուզէ յեղափո-
խութիւնը հիմէն քակել եւայլն ե-
ւայլն:

Անաւանդ եթէ քննադատող
ու քննադատող տարբեր տարբեր
յեղափոխական կուսակցութեանց
պատկանին, խայտառակութեանց
ամենապաշտօնին հոն տեսնելու է:
ալ խնդիրը իր բուն շրջանէն դուրս
կ'ենէն, հրապարակաւ կ'սկսին զի-
րար դաւաճան, թրջացած, ուռ-
աացած, վերջապէս ցած ու ցած
կոչել, ահագին զրպարտութիւններ
յիբիւրել, մութ անկիւններու մէջ
զիրար սպաննել ու զիրար մատնել:

Ահա այս դառն իրողութիւննե-
րը ամէն օր եւ ամէն առթիւ մէջ
մեր աչքին առջեւ կը պատահին:
որովհետեւ եւր այն ոսկալի եւր
այնչափ զօրացած է մեր մէջ, ո-
րով մենք ոչ ոքի չենք ներեր որ
զմեզ քննադատէ, եւ հետեւաբար
յառաջգիւժութեան այն զօրաւոր
խթանէն զմեզ զրկելով, յետադի-
մութեան ճամբան մէջ կը տապըլ-
տըկին ու կը տապալուրդին:



Դրօշակեաններու «Յաւելուած»ին
առթիւ կը հրաւիրէք Հնչակեան կու-
սակցութիւնը եւ ի մասնաւորի Պ. Ար-
փիարը՝ ինքզինքը արդարացնել յիշեալ
«յաւելուած»ի ամբաստանութեանց գէմ
արդէս զի նոր դաշխակութեան մը ա-
ռաջքն առնուի Ազգին մէջ: Ձեր հրա-
ւերը Պ. խմբագիր, շատ արդարացի է
եւ այժմէն վստահ կրնաք ըլլալ թէ ոչ
Պ. Արփիար ոչ ալ Հնչակեան կու-
սակցութիւնը կրնան լուս մնալ Դաշ-
նակցական կուսակցութեան կողմէ ի-
րենց վերագրուած այդ այնքան ծան-
րակշիռ ամբաստանութեանց հանդէպ:

Ըստ իս, սակայն, լրագրական թիւ
ու գէմ վիճարանութիւնները չեն որ
խնդիրը պիտի լուծեն եւ մի կամ
միւս կողմը արդարացնեն: Ի՞նչ
զոք մարդ խօսելով ներելի մտածել
որ եթէ Պ. Արփիար իրօք մատնու-
թիւններ գործած է՞ չպիտի ուզէ ու
չպիտի կրնայ իր արարքները խոստո-
ւանիլ: Իսկ եթէ Դաշնակցականներն
են որ կը զրպարտեն՝ անոնք ալ մին-
չեւ վերջը իրենց թմբուկը պիտի զար-
նեն նոր «տօքիւմէնտ»ներ ստեղծելով
ու հրապարակ նետելով: Հնչակեաննե-
րը պիտի շարունակեն Պ. Արփիարը
զրպարտութեան զոհ նկատել: Իսկ Դաշ-
նակցականներն ալ, հիմնուելով «Ի-
րենց «օրկան»ի ամբաստանութեանց վը-
րայ՝ պիտի շարունակեն նկատել զանի
իբրեւ դաւաճան: Իսկ չէզոք հասարա-
կութիւնը պիտի մնայ կատարեալ մու-
թի եւ անստգութեան մէջ, զի ոչ՝ ամ-
բաստանեալ ոչ ալ ամբաստանող կու-
սակցութիւնը իրաւունք ունի պահան-
ջելու չէզոք ժողովուրդէն որ իր յայ-
տարարութիւնները իբրեւ մաթեմատի-
քական ճշմարտութիւններ ընդունուին:
Տիւրք է մտածել թէ, այս պարագային,
ժողովուրդը ուրիշ բան չպիտի ունե-
նայ ընելիք բայց եթէ երկու կուսակ-
ցութեանց իրարու դէմ դրածները զօ-
սարաններու անկիւնը կարողալով մա-
մանակ անցնել չորս տարիէ ի վեր լը-
րագրական կռիւնները եւ փոխադարձ մեր
կացութիւնները տարբեր օղուտ մը չարա-
զրեցին: Եւ սակայն ուշադիր ընթեր-

ցողին աչքէն չի վրկալիր անշուշտ այն
անբարոյացումը որ ժողովրդային խա-
ւերու մէջ մուտ գործած է աչքի զար-
նող հանրային գործիչներու մշտական
դատափնտումով վերջին քանի մը տա-
րիները: Այս վիճակը յառաջ բերելու
աշխատող անձները կրնան իրենց կիր-
քերը եւ հաշիւները ունենալ՝ անտեսե-
լու համար հանրային բարոյականի հար-
ցը, բայց կարծես թէ ալ ժամանակը
եկած հասած է որ ժողովուրդը իր
թմբութիւնը թոթուէ եւ անաչառ ու
խտապահանջ ըլլայ հանրային բարո-
յականը ապականող անձերուն կամ
մարմիններուն դէմ, առանց կուսակ-
ցական կիրքերու եւ հաշիւներու խա-
ղալիք դառնալու: Պէտք է որ ժողո-
վուրդը զիմակալի ընէ այն անձերը
որոնք իր դիւրահաւանութեանը հետ
կը խաղան եւ մաքրէ այդպիսիները
հանրային ասպարէզէն:

Դառնալով Պ. Արփիարի խնդրոյն,
անա վեց տարի է որ հանրային բարո-
յականը կապական են զանի մատնիչ ու
դաւաճան ներկայացնելով ժողովրդին:
Ամբաստանութիւնը Պոլսէն սկսաւ. ա-
ռաջին ամբաստանողը Մեղքոն Կիւր-
ճեան ուսուցիչը եղաւ: Է. Պ. Արփիար
«Հայրենիք» լրագրին միջոցաւ զանի
պատուոյ ատենին մը առջեւ հրաւիրեց:
Մեղքոն Կիւրճեան խոյս տուաւ պատ-
ւոյ ատենէն: Խնդիրը մնաց անստեղծ
թեան մէջ: Արփիարի ծանօթները զին
քը անմիջ նկատեցին: Հակառակորդնե-
րը զաւաճան. զինքը չը ծանչցող ահա-
գին մեծամասնութիւնը վարանոտ մը-
նաց: Այդ միջոցները նազարբէկի հա-
մար Արփիարէն աւելի հայրենասէր
անձ գոյութիւն չուէր եւ այդ բանը
իր թերթին մէջ ալ հրատարակեց: Ի-
ստոյ երբ նազարբէկի յարաբերութիւն-
ները թէ՛ Արփիարի եւ թէ՛ Հնչ. կու-
սակցութեան հետ խզուեցան՝ սկսաւ
հրատարակել թէ Պ. Արփիար դաւաճան
ու մատնիչ է. ոչ ոք կարեւորութիւն
տուաւ, նկատի առնելով հակառակութիւ-
նը: Դաշնակցականները սակայն քիչ
յետոյ նոյնը տարածեցին իրենց գոր-
ծակալներուն միջոցաւ բայց բոլորովին
զաղտնի կերպով, այնպէս որ երբ ո, եւ
է Հնչակեան այդ գործակալներէն մէ-
կուն կը հանդիպէր ու բացատրու թիւն
կուզէր՝ անիկա կը փռթար պատաս-
խանել թէ՛ «Դաշնակցութիւնն այն-
քան էլ ծանծաղամիտ չէ որ նկատէ
«Արփիարին մատնիչ, բանը նրախումն
«է որ այդ պարտի մասին շատեր շատ
բաներ գրել ու խօսել են, հետեւաբար
«լաւ կանի որ միտոմամբ մեկուսա-
«նայ գործից: Ի վերջոյ երբ ժողովուր-
«դը կը տեսնի որ Արփիարը անմիջ է,
«նրան աւելի մեծ պատիւով կրկին ան
«գամ կ'առնէ գործի մէջ»: Եւ այսօրի-
նակ գործակալի մը հանդիպեցայ ան-

ձամբ. այդ անձը Պ. Պապանյանը էր որ նկատուած էր Դաշնակցութեան ամենէն հեղինակաւոր գործիչներէ մին. վերեւ դրուած յայտարարութիւնը զըրեթէ բառ առ բառ իրն է: Հակառակ այս կարգի յայտարարութեանց ամբաստանութիւնը անապիւն ծաւալով չը տարածուէր: Հնչակեան կուսակցութիւնը այդ պարագային կասկածեցաւ Դաշնակցականաց ռազմամտութեան մասին. զի եթէ համոզուած էին Պ. Արփիարի յանցաւորութեան, պարտաւոր էին ճակատաբաց յայտարարել զայն եւ մինչեւ իսկ Հնչակեան կեդրոնական վարչութեան տրամադրութեան տակ դնել իրենց ձեռքի ապացոյցները որպէս զի այս վերջինը ալ եթէ խաբուած էին: Ընդհարմարութեան վերահասու ըլլալով Պ. Արփիարը արտաքէին մէջերուն: Այս տարածայնութեանց հետեւանքով թէ՛ ժողովուրդի չէզոք դատակարգին եւ թէ՛ Հնչակեան կուսակցութեան մէջ բաւական գայթակղութիւն եւ իրարանցում յառաջ եկաւ: Հնչակ. կուսակցութիւնը մտաւել փորձուեցաւ թէ ո՛րք էր ուրեմն այն դադարի ամբաստանութեանց շարժառիթը: «Դրօշակ»ի խմբագրութիւնը առաջին անգամ իր տօքիւ մէջտեղերը ցոյց տուաւ պաշտօնապէս Պ. Ժանկիւլեանին, Հնչակեանք պահանջեցին որ իրենց ալ ցոյց տրուի իրենք ալ համոզուին, պատասխանը մերժողական եղաւ: Դարձեալ վարանում, դարձեալ անստգոյ թիւն ժողովրդային եւ կուսակցական խաւերու մէջ:

Բայց ահա այս անգամ 4-5 տարւան լուծեանէ վերջ Դաշնակցութիւնը պաշտօնապէս կը հրատարակէ Պ. Արփիարի վերագրուած երեք հարցաքննութիւնները: Ուրեմն Դաշնակցութիւնը այդ ամբաստանութեան ահեղ պատասխանատուութիւնը իր վրան կանգնէ:

Դաշնակցութեան առած այս խոշոր քայլը մեծապէս քաջայերական է, զի առեղծուածի մը վախճանին կը մօտենանք ասով: Ամեն արդարութիւնը սիրող մարդ փափաքող է տեղեկանալ բուն ճշմարտութեան:

Այս տեսակ ծանրակշիռ պարագայի մը հանդէպ. ինքզինքը յարգող, արժանապատուութեան տէր ո՛ր եւ է հայ ո՛չ մէկ ո՛չ միւս կողմին նկատմամբ կանխակալ կարծիքներով պաշարուելու չէ եթէ կուզէ ապահով եղանակով ճշմարտութեան հասնիլ:

Այս տողերը գրողը, վաղածանօթ հին չակեան մը, առաջինն է փափաքող ու պահանջող որ առանց ժամանակ կորսնցնելու անապառ քննութիւն մը բացուի այս գործին վրայ, բոլորովին չէզոք, ուղղամիտ եւ օրէնսդէս տարբերէ: Յայտնի է թէ ոչ ամբաստանիչ ոչ ամբաստանեալ կողմը ձայն կրնան ունենալ այդ ատենին մէջ, միայն թէ Ատեանի կազմութեան միջոցին կարող են այս կամ այն դատաւորին դէմ իրենց առարկութիւնն ընել եթէ նշանաւորուած անձը վերոյիշեալ երեք յատկութեանց մէկէն կամ միւսէն զուրկ է: Ամբաստանող եւ ամբաստանեալ պարտաւոր են, հարկադրուած են ընդունիլ այդպիսի չէզոք ատենին մը կազմութիւնը անպատճառ: Ոչ մէկ եւ ոչ միւս կողմը փախուստի ճանքայ չունին: Եթէ Արփիարի յանցապարտութիւնը հաստատուի՝ ես ամենէն առաջինը պիտի ըլլամ Դաշնակցական վարիչներու ճակատը համբուրող՝ այն գնահատելի ծառայութեան համար զոր այս կերպով թէեւ մետասաներորդ ժամուն, մատուցած պիտի ըլլան ամբողջ հայ ազգին: Արփիար, իր յանցապարտութեան վրէժիւնէն ետք, պարտաւոր պիտի ըլլայ կամ ինքնասպան ըլլալ եւ կամ Հնչակեան գնդակէ մը գնդակահար լի աւիս ալսչափ խիստ պիտի դանդաղ

Արփիարի նկատմամբ: Վստահ եմ որ ինծի պէս մտածողներու բանական կան: Իսկ եթէ ատենը վճռէ որ կուսակցական նեղ հաշիւներու ազդեցութիւնը այս մշտական անբարոյացուցիչ, որմէ տուեց ու կը տուէ յեղափոխական կուսակցութիւն մը եւ անբող ազգը, այն ատեն Հնչակ. կուսակցութիւնը եւ ազգը պիտի գիտնան վարուել Դաշնակցականաց հետ այնպէս ինչպէս որ պիտը է:

Բայց լաւ կշռենք խնդիրը. անիկա տեսնուածէն շատ աւելի կարեւորութիւն ունի, հանրային բարոյական խնդիր է: Իր ամեն համեմատութիւնները պահելով, տեսակ մը Տրէյֆուսի խնդիր դարձաւ Արփիարի խնդիրը մեր մէջ: Ալ այս անգամ մաքուր, արմատապէս մաքուր պէտք է այդ խնդիրը. թեթեւ դարմաններ, թուրքիներ, պարօշիւրներ անօգուտ են ու մինչեւ իսկ փաստաւոր:

Մեղի քննութիւն պէտք է, խիստ, անապառ, խելացի, մանրակրկիտ քննութիւն:

Այս քննութիւնը պահանջելու են Հնչակեանները, այս քննութիւնը պահանջելու են Դաշնակցականները. այս քննութիւնը պահանջելու է ամենէն ազգու, ամենէն աւելի լսելի եղանակաւ ժողովուրդը, չէզոք տարրը, եթէ երբեք ժողովուրդը ըսածնիս զիսկ մը չէ, եթէ երբեք էիր մէջ՝ բարոյական սերմեր կը կրէ: Այո, թէ՛ Հնչակեան կեդրոնէն թէ՛ Դրօշակի պիւրօյէն քննութիւնը պահանջենք չէզոք Ատեանի մը առջեւ:

Հնչակեան մը
ՎԱՆԵՑԻՈՑ ԹՈՒՔԸ
ԲԱՅ ՆԱՍԱԿ ԱՌ Պ. ՎԱՐԴՕ (*)

«Իրաւունք»ի 10րդ թիւոյն մէջ կարդալով խմբագրուած Յարութիւնի նամակը, մեզ հետ մէկտեղ բոլոր վանեցիներուն սիրտը արգար զայն ըրոյթով մը լեցուեց, որով ստիպուեցանք հրապարակաւ հարցնել «Շարժում»ի խմբագիր Վարդօին, որ քաջութիւնը ունեցած է՝ Օթէլ «Տունավ»ի մէկ անկիւնը վանեցիներուն վրայ լծելու, թէ իր այդ թուրքօք թէ իր այդ անարգած ու նախատած վանեցիներ ժողգէնը, լիւրջեաններ, Ազրիպասեաններ, որոնք Յեղ. նախակարապետներն եղան, չը մտաբերեցիր արդեօք թէ Տերոյաններ եւ Աւետիսեաններ Չեղ պէս խաբեբանութիւնը, յանձն առին լոկ մեր թըշուառ հայրենիքի փրկութեան համար. հապա՞թ թոխմախեան Արսէն վարդապետը. . . Ոսկան Նապուրը, Խոջապէս մոռնալ Ոսկանը, որ իր կեանքին վերջերը տեսնելով ձեզ պէս կեղծ ու ստոր յեղափոխականներու չնորհիւ ազգին թշուառացած վիճակը, քաջութիւնը ունեցաւ ձեր դիմակները պատուելու: Մոռցա՞ք որ ատոնք վանի զաւակներն են, Հայաստանի ժողգէն

(*) Անցեալ չաթիւ ութը վանեցի ազգայիններու ստորագրութեամբ սոյն բաց նամակը ստացած էինք ու տեղու անձկութեան պատճառաւ յետաձգած: Բայց այդ յետաձգման գէ՛մ վանեցի ազգայինք բորբոքած, զիմեցին անոնցմէ մէկ քանին խմբագրատունս եւ պահանջեցին անպատճառ այս նամակի հրատարակութիւնը:

Խմբ.

ծնած ու անոր սուրբ հողին վրայ, նահատակուած. մոռցա՞ք կամ միթէ կուրանա՞ք ներկայիս մէջ չը տեսնելու համար տոտոց յաջորդը Ճանկիւլեանը. ու տակաւին ամէն սրբութիւն ոտքի տակ առնելով գոք պարո՞ն, դուք որ ամենէն աւելի պատրաստ էիք տոտոց յիշատակը յարգելու՝ յիմարութիւն ունեցա՞ք հայութեան այդ պաշտօնի զոհերուն ճակտին ձեր թուրք նետելու առանց մտածելու թէ՛ ձեր այդ արարքներով թուրք մըն էք արդէն ձեր պատկանած կուսակցութեան ճակտին եւ նախատինք հայութեան. եւ մենք հպարտութեամբ կուգանք ըսել թէ վանեցի մայրիկ մինչեւ ցարդ ծնած չենք եղ պէ՛ս բազմախնդիրներ. վա. նեցին այնքան բարձր է քեզմէ, որ նախամեծոր կը համարի թըքնել ցեխին քան քեզի պէսներու վրայ, ինչպէս որ վայելէ Աւետեան դարաւոր բազմախնդիր ճակտին:

Մարտիրոս Յակոբեան
Մկրտիչ Կարապետեան
Յարութիւն Մուրադեան
Արքայան Խաչիկեան
Մկրտիչ Մանուկեան
Վարդան Կարապետեան
Խաչիկ Վարդանեան
Լեւոն Յարութիւնեան

Յ. Գ. Յարգելի խմբագիր հա. ճեցէք յառաջիկայ շաբաթ աւուր թիւով անփոփոխ հրատարակել առանց առարկութիւններ ընելու:

Նոյնք
Վառնա 2 մարտ 1900

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պոռնիկազ 16 մարտ 1900

«Իրաւունք»ի 6 փետր. թիւին մէջ հրատարակուած յօդուածս «Ականատեսի» մը, ո՛վ գիտէ, ի՞նչ անձնական հաշիւներուն չգալով, գիտած է «Հայելի»ի սուղ էջերուն, ու հո՛ն, իր թիթեղեայ ակնոցներով դիտած ըլլալ կարծելով ամեն բան 40 ոսկւոյ խնդիր մը եւ «Օգնասէր Հայուհեաց» ընկերութեան գործառնութիւնները պատմել աշխատած է:

Ես շատ ուրախ պիտի ըլլայի, եթէ հաստատուն փաստերով ու վկայութիւններով ուղղամիտ ու լուրջ քննադատական մը երեւէր «Հայելի»ի էջերուն մէջ, ուր հերքուած ըլլային «յօդուածիս» կարեւոր կէտերը եւ հաստատուած ըլլային թէ հակառակ մեր գրութեան հինին պէս դարձեալ կուրս եւ ընդհանուր խառնակութիւնն ու անիշխանութիւնն է որ կը տիրէ Պուրկազի ազգային գործերուն մէջ, որոյ շուրջը կը գառնար մեր գրութեան գլխաւոր մասը:

Յաւալի է նկատել որ ժամանակէ մը հետեւ արժող, չարժող ամեն գրիչներ, յաճախ ինքզինքնին ցոյց տալու անապառութենէ մը կամ ո՛վ գիտէ ի՞նչ աղտոտ հաշիւներէ մղուած, հրապարակ կը նետեն պոչաւոր սուտեր, եւ կաշխատին հանրութեան միտքը պղտորել եւ ճանկել ամեն ինչ որ ազգագուտ է, որ յուսալից է:

Որչափ որ գիտեմ եւ կը զբաւ «Թօղուածագրի» մը սեպուհ պար.

տականութիւնն է անաչառ եւ ուղղադատ ըլլալ, չիշխալ ազդեցութեանց տակ, ու գրել այն, ինչ որ հանրութեան օգտին կը ծառայէ եւ հեռի է անտեղի կերքեր յուզելէ եւ կարայր եղբօր դէմ գիշելի: Ու ինձ կը ձայնակցին այն ամեն խղճամիտ անձեր, որոնք ցաւօք սրտի կը դիտեն վերջին տարիներս լրագրութիւնը ողորդողը. նամէջ քննադատականներ ու լուտանքներ, որոնք ժողովրդեան բարոյականի մակարդակը ստորնացրելէ անգին ուրիշ բանի մը չեն ծառայեր:

Տեղւոյս «Օգնասէր Հայուհեաց» ընկերութեան քայքայուելէն վերջ ունեցած 40 ոսկւոյ գումարին բընական էր որ աչք տնկող անխղճներ պիտի գտնուէին որոնց մէջ կարող ենք գնել նաեւ մեր «Ականատես» պարունը, բայց բարեբաղ դաբար ուղղադատ անձնաւորութիւններ գէզօքացնելով զայն, յաջողած էին միշտ անձեռնմխելի պահել յիշեալ գումարը, Պանքային մէջ, «Օգնասէր Հայուհեաց» ընկերութեան գործադիր ժողովոյ անդամուհեաց ստորագրութեան ու պատասխանատուութեան տակ:

Վերջերս, քանի մը անհատներ ուղղելով իրենց անձնական գործին յատկացնել յիշեալ գումարը կը համոզեն գործադիր ժողովոյ ան.

դամուհիք՝ առնել Պանքային ըստակը եւ իրենց յանձնել աւելի բարձր տոկոսով մը: Դրամը կանուխ Պանքային. բայց դեռ ուրիշներու ձեռքը չանցած, թաղականութիւնը ու Հոգաբարձութիւնը գործին տեղեկանալով պէտք եղած միջոցներուն կը դիմեն, ու կապահովին գումարը, քաղաքիս պատուաւոր վաճառականներէն մէկուն քով ձեռքով օրինական տոկոսով:


Հիմա ստակը կը մնայ հոն, քաղաքիս մէջ հանրածանօթ եւ վստահելի անձնաւորութեան քով. իսկ Հոգաբարձութիւնն ու թաղականութիւն կաշխատին յարմար գեղին մը գտնել գնելու, եւ ապա գային վարժարան մը կառուցանելու համար:

Ահա այս է բացարձակ իրողութիւնը, որ աւելորդ համարած էի լրագրի նիւթ ընել այժմէն, երբ հողը գնուած չէ եւ գործը որոշ եղրակացութեան մը յանգած չէ:

Շատ կը զարմանամ որ խնդրել «Ականատեսի» խելապատակին մէջ տարբեր գոյն մը առած, բոլորովին յերկրուած սուտերով հրապարակ նետուած է, միմիայն բան մը ըսած կամ գրած ըլլալու սին յաւակնոտութեամբ մը:

Կը ցաւիմ իր վրայ:

Յոյակ



1800-1900

Ե.
ԻՏԱԼԻԱ

(Շարունակ. նախորդ քառեկ)

Խոտալիոյ մէջ հետզհետէ տեղի ունեցած վարչական փոփոխութիւնները վերին աստիճանի անհանգիստ կընէին վիեննայի կառավարութիւնը որ երթալով Խոտալիոյ մէջ իր դիրքին խախտելը կը տեսնէր: Թէեւ Խոտալիոյ այլ և այլ կողմերը մասամբ մը խաղաղացած էին, բայց Աւստրիոյ լուծին ներքեւ գտնուող մասին մէջ տիրող յուզումը շատ մեծ էր:

Ապստամբութեան առաջի նշանը տուաւ Միլան քաղաքը ելլելով: Միլանի խռովութիւնները նշանաւոր են պատմութեան մէջ Միլանի ձիւղ օրերը անունով: Աւստրիացի Ռատէցքի մարաշխտը ամեն միջոց ի գործ դրաւ խռովութիւնները դադարեցնելու համար. արիւննահող կռիւններ տեղի ունեցան. բայց Միլանցիք յաջողեցան դիմադրել Աւստրիոյ և առժամայ վարչութիւն մը հաստատել: Միլանի հետեւեցաւ վենետիկ և հըռլսկեց վենետիկի ինքնիշխան հաւասարակապետութիւնը:

Այս երկու վիճակներուն ձեռք բերած յաջողութիւններէն խրախուսւած քաղաքացիները, Պերկամա, Պրէշիա, Գրէմոնա, Մանդուա և Մոնթեմա, ինչպէս նաեւ ուրիշ քաղաքներ. փխտնութիւն, Խոտալիոյ եւ Նաբոլիի իշխանութիւնները քաջալիրուած այս շարժումներէն իրենք ալ իրենց կարգին դիմադրել սկսան Աւստրիացւոց դէմ: Ռատէցքի տեսնելով որ ինքիւր սովորական ապստամբութեան սահմանէն անցաւ, լրջօրէն պատերազմի ձեռնարկեց դիմադիր տարրերուն դէմ: Այս այս առիթէն կը սկսի արտաքին պատերազմներու և ներքին կերպ կերպ խռովութեանց շրջանը:

Երոպա անհանգիստ Խոտալիոյ մէջ անցած դարձածին ակնդէտ և ուշադիր կը հետեւէր որ կը խոստանար մեծկակ փոփոխութիւն մը յառաջ բերել Եւրոպայի Պետական շրջանակներու մէջ:

Արտաքին պատերազմներու մէջ Աւստրիացիք բաւական յաջողի սկսան վենետիկի գաւառին և Միլանի նորէն տիրեցին: Աւստրիացւոց այս յաջողութիւնները և Խոտալիոյ տրուած կրկնակի հաւանական չվհատեցուցին սակայն Խոտալիոյ, ընդհակառակը ամեն ժամանակ աւելի ժողովուրդը մէկ սիրտ և մէկ հոգի սկսաւ ալ աւելի սուր կերպով մղել ազատութեան պայքարը, կռիւը թէ ներքին եւ թէ արտաքին, ապստամբութիւնը դրեթէ ամբողջ Խոտալիա ծաւալեցաւ: Ազատականք կուգէին Խոտալիոյ մէջ տիրող թէ օտար

ցեղերը և թէ Աւստրիական լուծը միանգամ ընդմիշտ նետել իրենց գլխէն:

Այս միջոցներու Խոտալիական և կախ երկիրներուն մէջ ամենէն հեղինակաւորը ու Խոտալիացւոց ալ սիրելին փխտնութիւն իշխանութիւնն էր: Որուն գլուխը կը գտնուէր Վիկթոր Էմանուէլ Բ. թագաւորը Սափոյան տունէն: Փխտնութիւնն ինչպէս մասնակցած է Խոտալի պատերազմին և կռուած ընդդէմ Ռուսիոյ Եւրոպական միւս պետութեանց հետ այս պարագան ալ աւելի զօրացուց փխտնութիւնի դիրքն թէ ներքնապէս և թէ արտաքին համազգային շրջանակներու մէջ:

Այն ատենները Վիկթոր Էմանուէլի քով կար Գափուր կոմսը. անցեալ դարուն մէջ Երեւոյց նշանաւոր քաղաքագէտներէն զրեթէ առաջինը:

Խոտալիական միութեան մը գաղափարը որ արդէն կար սկսաւ հետզհետէ լուրջ կերպարանք մը առնել և շարժումները դէպի այդ նպատակին իրագործմանը դարձան: Խոտալիական միութեան համար մղուած կռիւին և եղած շարժումներուն գլուխը եկաւ անցնել Սափոյան ցեղը: Խոտալիական ամեն կողմ բռնկած ազատութեան նախընթաց տաժանելի շրջանին մէջ կը տապալուէր: Պատմութեան մէջ հազուադէպ այս դիւցազնական և սուրբ կռիւին նշանաւոր և պատմական գլուխները եղան Վիկթոր Էմանուէլ Բ. թագաւորը անմահ կարիպալտին որուն իշխանութեան ու անունը համազգային յարգանքին յարիւրեցաւ: Խոտալիական ցեղը, ինչպէս նաեւ Գափուր որուն հիանալի ներութեամբ զբաղած քաղաքագիտական ուղղութեանը շնորհիւ յաջողեցաւ Խոտալիական ձեռք բերել Նաբոլէոն Գ. կայսեր աջակցութիւնը ընդդէմ Աւստրիացւոց, որով Լոմպարտիան և վենետիկ վերջնականապէս միացան Խոտալիոյ, որ շնորհիւ Սափոյան տան եւ երկար տարիներ մը զուտ արիւնալի պատերազմներուն օտար ամեն լուծ վրայէն նետած մէկ երկիր մէկ տէրութիւն մը կըլլար Վիկթոր Էմանուէլի Սահմանադրական վարչութեան ներքեւ և կանցնէր Եւրոպական մեծ Պետութեանց շարքին մէջ:

Խոտալիա տեղի ունեցած այս փոփոխութեանց մէջ նաեւ կայնը շանակելի և պատմական մեծ փոփոխութիւն այն է Երեւոյցայ վիճակին ջնջումը և Պապերու աշխարհական իշխանութեանց վերջ մը տրուելը: Հռովմ նորակազմ Խոտալիական պետութեան մայրաքաղաքն եղաւ Եւ Քրիստոսի ուղղակի փոխանորդը ըլլալու յաւակնութիւնը ունեցող Պապերը միանգամ ընդ միշտ կորսնցուցին իրենց աշխարհական զօրութիւնը որ այնչափ աղիտաբեր եղած է նոյն իսկ քրիստոնեաներու: Պիոս Թորգ. Պապը միայն կը մնար հոգեւոր Պետ կաթողիկ եկեղեցւոյ:

Վիկտոր Էմանուէլի յաջորդը

եղաւ իր տղան Ումպերթօ Ա. արքայ թագաւորը. որուն վարչական ուղղութիւնը իր մեծանուն հօր գծած շաւղին շարունակութիւնը եղաւ: Խոտալիա իր դժբաղտութեան մէջ ամենէն աւելի իրեն նըպաստող Ֆրանսայի դէմ կազմուած երեակ նիդակակցութեան մէկ անգամն է այսօր: Խոտալիա իբրեւ պետութիւն կազմակերպուելէն վերջը ձեռնարկեց գաղթային երկրաւարութեան որուն համար ունեցաւ հապեղիստանի պատերազմը որուն ձախող ելքը ահագին հաւրուած մը տուաւ Խոտալիական գանձին եւ երկիրը մատնեց աղքատութեան: Այսօր Խոտալիա թէ և մեծ պետութեանց կարգին մէջ իր տեղը կը բռնէ բայց այդ տեղը պահելու համար ստիպուած է իր կարգութեան աւելի մեծ զոհողութեանց յանձնառու ըլլալ: Ինչ որ ահաւելի կերպով կը ճնշէ այսօր Խոտալիան եւ ժողովուրդը: Որուն եթէ փութով գոհացուցիչ դարման մը չը տրուի հաւանական է որ տխուր տեսարաններու տեղի տայ:

(Շարունակելի) Ս.

ԼՐԱՔԱՂ

Մեր նախորդ թուով արդէն իմացուցած էինք թէ Սոսի. Կաթողիկոսական ընտրութեան խընդրոյն առթիւ Պատրիարքարանի և Դատական ու Կրօնական գործոց նախարարութեանց միջեւ անհամաձայնութիւն մը ծագած կերեւի: Նոյնպէս հաղորդած էինք թէ այդ խնդրոյ առթիւ Օրմանեան պալատ դիմած է. այժմ նորագոյն լուրեր և տեղեկութիւններ կը գան մեր ըսածը հաստատել և Օրմանեանի հրաժարած ըլլալն ալ իմացնել:

Աման Պոլսկարի հեռագրական գործակալութիւնը մարտ 18 թ. Երեւանու Պոլսէն կիմացնէ թէ Օրմանեան և Արթիւր Գալա Տատան Հնչակեան յեղափոխական կուսակցութեան մահ սպաննացող նախնիներ ընդունած են. այդ նախնիներով իրենց կազմաբարձր անմիջապէս պաշտօնէ հրաժարելու քանի որ պաշտօնավարութիւնին ազգին քննադատ եղած է և կըլլայ:

Եւ Պոլսէն Սօփիայի ճանքով մարտ 29ին հետեւեալ հեռագիրը տրուած է թաւն-ի:

«Օրմանեան հրաժարած է ու իր հրաժարականը ետ առնելու միտք չունի, մինչեւ որ կառավարութեան կողմէ քանի քանի առիթներու մէջ իրեն տրուած խոստումները գործադրուին:

«Սոսի կաթողիկոսական խնդիրը որ այնչափ ատեն ձգձգուեցաւ եւ որ այս անգամ ալ հրաժարականին պատճառ եղաւ, կենսական կարեւորութիւն ունեցող խնդիր մըն է Հայոց Պատրիարքարանին համար: Պատրիարքարանը համոզուած կերեւայ թէ կառավարութիւնը կը ջանայ Սոսի կաթողիկոսութիւնը Պոլսոյ Պատրիարքութիւնէն անջա-

տել, և եկեղեցական զատ իշխանութիւն մը ընել որ ուղղակի կառավարութեան հետ կապ ունենայ, ալ հաշուով երկու Պատրիարքութիւններ պիտի ըլլան:

«Պատրիարքը ալ եւս միայն Կաթողիկոսական խնդրոյն կարգադրութեամբ չը բաւականտը հրաժարականը ետ առնելու, այլ կը պնդէ իրեն եղած ուրիշ գլխաւոր երկու խոստումներու գործադրութեան վրայ, որոնք են, Հայոց յետ նեալ ղեկավարական տուրքը բաշխել, որ քանի մը հարկը հազար ոսկիի կը հասնի, և հայ ճամբորդներուն գաւառէ գաւառ ինչպէս նաեւ տրտաւահամեմեմ երթեկեկուն գէմ ի գործ դրուած դժուարութիւններն ու արգելքները վերցընել:

«Օրմանեան իր այս պահանջները կառավարութեան կատարել տալու իրաւունք ունենալ կը կարծէ, նըկատելով թէ իր պատրիարքական դահը բարձրանալէն ի վեր թուրք կառավարութիւնը Հայոց ընթացքէն գանգատելու ու եւ պատճառ մը չէ ունեցած:

—Ս. Հայրապետին հրամանաւ այսուհետեւ Յունարէն լեզուն պիտի աւանդուի Գէորգեան ճեմարանի բարձրագոյն կարգերուն մէջ:

—Ատանայէն Պատրիարքարան տրուած տեղեկութեան մը համեմատ. կաթողիկոսական ընտրութեան գործողութիւնը մէկ քանի օր յետաձգուած է:

—Երզնկայի Ազգ. վարժարաններուն հոգաբարձութիւնը չափազանց երկարաձեռնութիւնը հաս երկսեռ ազգայիններու համար կիրականօրեայ դաստիարակութիւններ հաստատած է:

—Ի նպատակ Ազգ. Հիւանդանոցի տրուած նուագահանդէսին զուտ արգելքը եղած է 800 օսմանեան ոսկի:

—Աւստրիոյ կայսրը առաջնաւոր պատմանշան մը շնորհեց Սուլթանի նահանգապետի օգնական Պ. Գէորգ Պօթուշանեանին:

—Այս օրերս Բարիզի բժշկական համալսարանին մէջ, երկու հայ օրիորդներ յաջող թեզ մը անցուցած են. մանաւանդ Օր. Թար. խանեանց ընդհանուրին գնահատման և ծափահարութեանը արժանացեր է:

—Բարիզ վախճանեալ Քարաքէհա Գէորգ Պէյ մէկ միլիոն ոսկիէ աւելի հարստութիւն մը ձգած է իր ժառանգորդներուն:

—Պոլսական թերթերէն ցաւօք կիմանանք կարող գրագէտ և ծանօթ քրոնիկագիր Պ. Միլտիշ Ծահնդարի մահը:

